ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2023թ. **N -----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Սարգիս Մադաթյանին նշանակել Երևանի քաղաքապետի տեղակալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքապետի տեղակալներին քաղաքապետի ներկայացմամբ նշանակում է ավագանին:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանուն առաջարկվում է Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակել Սարգիս Մադաթյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՍԱՐԳԻՍ ՄԱԴԱԹՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծնվել է 1979թ. հունվարի 22-ին, Երևանում:

1985-1995թթ. սովորել է հ. 68 միջնակարգ դպրոցում:

1995-1999թթ. սովորել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետում՝ ստանալով բակալավրի աստիճան:

1999-2001թթ. զորակոչվել է և ծառայել է ԱՀ զինված ուժերում, այնուհետև ՀՀ զինված ուժերում:

2001-2002թթ. աշխատել է «Արբանգ» ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու:

2002-2004թթ. աշխատել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության քաղաքացիական-տնտեսական օրենսդրության փորձաքննության բաժնում՝ որպես 1-ին կարգի մասնագետ:

2004-2006թթ.աշխատել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության և զարգացման վարչության իրավաբանական ծառայությունում՝ որպես 1-ին կարգի մասնագետ:

2005թթ. շնորհվել է Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

2008-2009թթ. ընտրվել է Երևան քաղաքի Էրեբունի համայնքի ավագանու անդամ:

2009-2014թթ. աշխատել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության նորմատիվ-իրավական ակտերի մշակման և իրավական փորձաքննության բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

2010թթ Շնորհվել է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության երրորդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

18.03.2015-2015թթ. նշանակվել է ՀՀ քաղաքաշինության նախարարի խորհրդական:

2015թ-2016թթ աշխատել է ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխտակազմի իրավաբանական վարչությունում ՝ որպես խորհրդատու:

27.06.2016-2016թթ աշխատել է ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի բնակարանային քաղաքականության և կոմունալ ենթակառուցվածքների վարչությունում՝ որպես խորհրդական:

2016-2023թթ եղել է «Դիզային Շին» ՍՊԸ-ի տնօրենը:

Ամուսնացած է, ունի երկու զավակ: